քը: Մենք նստեցինք, նահապետական նաւակը երկու ժամից յետոյ մեզ հանեց «դրսի տունը», որ գտնուում է կղզու հանդէպ, նրա հիւսիս-արեւելեան ցամաքի վրայ: Վանայ ծովակի մէջ գտնոող միւս կղզիները եւս՝ Լիմ եւ Աղթամար, որոնց մէջ ճգնաւորների անապատներ կան, այսպիսի «դրսի տներ» ունեն: Այստեղ է կենտրոնացած վանքի ամբողջ տնտեսութիւնը: Այստեղ են բնակւում մշակները, որ մշակում են վանքապատկան ընդարձակ հողերը: Այստեղ են պահւում վանքի բազմաթիւ անասունները իրանց հովիւներով եւ նախրապաններով: Այստեղ է վանքի գլխաւոր հարստութիւնը: Այստեղ աբեղաները կանանցից չեն խորշում. նրանք են թխում հացը, նրանք են պատրաստում կերակուրը վանքի բազմաթիւ բանոորների համար, նրանք են կթում ոչխարները, պանիր են մակարդում, իւղ են պատրաստում, նրանք են մանում բուրդը եւ նրանից հայր սուրբերի համար հագուստ պատրաստում: Այստեղ կեանք կայ: Այստեղ, «դրսի տան» մէջ, գործում են, իսկ այնտեղ, ներսի տան մէջ, անապատում, միայն աղօթում են:

Մեզ ընդունեց «դրսի տան» տնտես-մատակար աբեղան, մի բաւական ուրախ, զոարճախօս անձ եւ, հրաւիրելով իր սենեակը, ասաց.

— Գնանք, գիտեմ, այնտեղ ձեզ քաղցած պահած կը լինեն, գնանք մի բան ուտենք:

Այդ կրօնաւորը հէնց առաջին րոպէից այնքան համակրական երեւաց, որ մենք չկարողացանք մերժել նրա հրաւէրը: Նա տարաւ մեզ իր սենեակը, որ անապատի մէջ մեր տեսած խուցերի հետ համեմատելով, բաւական օրինաւոր պէտք էր համարել: Որքա՜ն մեծ զանազանութիւն աշխարհին մօտ կրօնաւորի եւ աշխարհից կտրոած կրօնաւորի մէջ: Շուտով պատրաստել տոեց մեզ համար պատոական նախաճաշիկ, որ բաղկացած էր սերից, կարագից, մածունից, մեղրից եւ սպիտակ հացից: Նրա սենեակում գտնոեցաւ մինչեւ անգամ օղի. նա առաջարկեց մեզ մի-մի բաժակ, թէեւ ինքը չխմեց:

Բայց, ինչ որ աւելի գրաւեց մեր ուշադրութիւնը, դրանք էին մի խումբ դեռահաս պատանիներ, որոնք, մի առանձին խոժոռադէմ, մռայլ աբեղայի հսկողութեան ներքոյ, պարապում էին մի այլ սենեակում: Այստեղ դպրոց չէր, այստեղ մի տեսակ նախակրթարան էր, որի մէջ այդ պատանիները պէտք է նախապատրաստուէին անապատը մտնելու համար: Նրանք պէտք է անցնէին այն բոլոր փորձութիւնների միջով, ինչ որ պահանջում է անապատական կեանքը: Պահ, ծոմ, անքուն գիշերներ, մշտական աղօթք, խոնաւ եւ մութ խղիկներում գետնախշտի կեանք, անպայման հնազանդութիւն, հրաժարումն բոլոր բաւականութիւններից, մի խօսքով, կատարեալ անձնուրացութիւն, այդ պէտք է լինէր այն փորձութիւնը, որի միջով, տարիների ընթաց-